

ԷԶԵՐ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

«Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր
դժբախտ հայրենիքը աւելի գեղեցիկ է»

ԿՈՄԻՏԱՍ

*Հայ-իտալական մշակութային կապերը դալիս են դարերի
խորքից եւ ունեն հարուստ աւանդոյթներ: Թոյլ տուէք անդրա-
դառնալ հայ-իտալական երաժշտական առնչութիւնների պատմու-
թեան որոշ՝ մեր կարծիքով առաւել ուշագրաւ էջերի:*

«Մինչդեռ բնութեան փաղցրաբոյր եւ փաղցրանուագ նոր
սերունդը կը պատրաստուէր՝ ձմրան տխուր վարագոյրը պա-
տառելով՝ գալ գարդարել գարնան զուարթութիւնը, եւ երբ
բնութեան նորածին ու երիտասարդ երաժիշտ լանջերնին ու-
ռած դայլայլիկնին կը հնչեցնէին, Չուհանեանի թշուառ հո-
գին կը յուզուէր, կը հիւծէր Զմիւռնիոյ մթնոլորտին տակ,
տխուր մահնին մէջ. այն հոգին՝ որ կը յուսար իւր թրթռուն
ձայնով ու մատուրներով՝ հետեւիլ բնութեան երաժշտաց սըր-
բենի նուրբութեան. այն հոգին, որ 55 տարիներէ ի վեր
Պոլսոյ սալոններուն եւ թատերաբեմերու մէջ իբր Հայ Վերտի
կը ծափահարուէր. այն հոգին՝ որուն վառվռուն երեսակայու-
թեան գեղեցիկ արտադրութիւններն ի Փարիզ, յԵփալտոս եւ
յԱթէնս համակրելի ընդունելութիւն գտած էին: Չուհանեան
կը պատրաստուէր վերահաս ամրան հետ տեսնել նաեւ իր
կործանուած առողջութեան ամառն ալ, բայց անաչառ փաղց-
կեղը կը ճնշէր նորա մարմինը, եւ նուագելի հոգին թեւ առ-
նելով՝ կը սաւառներ»: Ահաւասիկ այսպէս արձագանքեց «Բազ-
մալէպը» հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցի
սկզբնաւորող, հայկական առաջին օպերաների եւ օպերետների,
ռոմանսների ու գործիքային ստեղծագործութիւնների հեղինակ,
արեւմտահայ իրականութեան մէջ երաժշտական առաջին թատրո-
նի կազմակերպիչ Տիգրան Չուխանեանի մահուան գոյժին 1899

թուականի փետրոսարեան համարում տպագրուած «Հայ Վեր-տին» վերտառութեամբ յօդուածում:

Յիրաւի, բացառիկ է Չուխանեանի դերը հայ երաժշտու-թեան անդաստանում, մեծ ու անգնահատելի՝ նրա վաստակը հայրենական երաժշտական մշակոյթի առջեւ: Արեւելեան երա-ժիշտներից նա առաջինն էր, որ ստանալով մասնագիտական երաժշտական կրթութիւն եւ կատարելապէս տիրապետելով եւրո-պական կոմպոզիտորական տեխնիկային, իր հանճարի ուժով փորձեց գտնել Արեւելքի ու Արեւմուտքի երաժշտական մշա-կոյթների մերձեցման ուղիները, արեւելեան երաժշտութեան սե-փականութիւնը դարձրեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային երաժշտութեան բարդ ժանրերը: «Ինքը (Չուխանեանը) բոլոր անձամբ երգի արիւստին նուիրած էր իր անձը, որ բնական համարով մ'ալ օժտուած ըլլալով՝ նոր տեսակ երաժշտու-թեան հիմնադիրը, վարպետ մեկնիչը ու ղեկավարը հանդիսա-ցաւ: Ինքը արեւելեան ազգերու մեղեդիները ի մի ձուլելով՝ նոր դպրոցի մը ստեղծողը եղաւ, եւ Վոսփորի քանաստեղծա-կան երկնքին տակ երազուած ամեն ներդաշնակութիւնները իր բնաբն լսուեցան», -սա էլ իտալացի կոմս Ռիկարդոյ Թոր-րէի գնահատականն է՝ զետեղուած Բոլոնիայում լոյս տեսնող թերթերից մէկում 1909-ի փետրոսարին տպագրուած «IL Verdi Armeno» խորագրով յօդուածում:

Խորհրդանշական է, որ Կ. Պոլսում Չուխանեանի երաժշ-տութեան առաջին ուսուցիչը իտալացի դաշնակահար մանսորո Մանձոնին էր: Հէնց նրա խորհրդով էլ, մասնագիտական կրթու-թիւն ստանալու նպատակով 1861-ին Չուխանեանն ուղեւորուում է Իտալիա՝ արուեստագէտ հոգիների Հայրենիքը, օպերայի Հայ-րենիքը: Միջանում են անցնում նրա ուսումնառութեան տարի-ները, այստեղ է նա ծանօթանում իտալական օպերային երաժշ-տութեան, ի մասնաւորի՝ Ջուզեպպէ Վերդիի ստեղծագործու-թեան հետ, որն անբաժան էր յանուն ազատութեան, անկախու-թեան եւ ազգային համախմբման՝ իտալական ժողովրդի պայքա-րից ու երբեք չխզեց կապը Ռիսորջիմենտոյի հօր դարաշրջանի հետ՝ դառնալով իտալական յեղափոխութեան մանսորո:

Թրծուելով իտալական ժողովրդի ազատագրական պայքարի բովում, Չուխանեանը Պոլիս վերադարձաւ որպէս Վերդիի հոգե-ւոր սան եւ դարձաւ 19-րդ դարի երկրորդ կէսի արեւմտահայու-թեան ազգային-ազատագրական շարժման երգիչը՝ իր հետաքրք-

րութիւնների կիզակէտում յարատեւ պահպանելով երաժշտական թատրոնը:

Հանճարեղ Ուսուցչի հանդէպ սէրը, ակնածանքը, պատկառանքն ու երախտագիտութիւնը Չուխանեանը պահպանեց մինչեւ կենաց վերջին վայրկեանները. քչերին է յայտնի, որ մահուան մահճում երգահանը սնարի մօտ հերթապահող իր «պահապան հրեշտակ» Սմբատ Քէսէճեանից խնդրել է սիրելի մաստրոյի հեղինակած «Օթելլո» օպերայի պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տուել երկրային կեանքին...

Անուրանալի է իտալական օպերային արուեստի դերն ու նշանակութիւնը ազգային երաժշտական թատրոնների ձեւաւորման գործում: Գաղտնիք չէ, որ երկար տարիներ ապրելով Իտալիայում, բացայայտելով իտալական bel canto-ի գաղափարները, գործնականօրէն իւրացնելով իտալական օպերայի ավանդութիւնները, Ստրաւինսկու կողմից անուանուելով «ռուսական Ռոսսինի», Միխայիլ Գլինկան (1804-1857) հէնց Իտալիայում յղացաւ ռուսական ազգային օպերայի՝ «Իւան Մուսանինի» ստեղծման գաղափարը: Եւ դա պատահական չէր. չէ՞ որ ազգային օպերայի ստեղծման գաղափարը հնարաւոր էր իրականացնել միայն այնժամ, երբ արդէն հասունացել էր այդ մեծ ու պատասխանատու խնդրի կատարման ընթացքում. եւրոպական մակարդակի ապահովման հնարաւորութիւնը:

Նմանատիպ ճակատագիր ունեցաւ նաեւ առաջին հայկական օպերան: Դեռեւս Միլանում ուսանելու տարիներին, պոլսահայ հանրածանօթ լուսանկարիչ Գէորգ Ապտուլլահը Չուխանեանին է ուղարկում «Արշակ Բ.» օպերայի լիբրետոն, որի հեղինակն էր թատերական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, ուսուցիչ, թարգմանիչ, գեղագէտ, գրական քննադատ Թովմաս Թերզեանը: Պոլիս վերադառնալով կոմպոզիտորն իր հետ բերում է աւարտուած օպերան՝ բացառութեամբ Նախերգանքի, որը յօրինում է հետագայում: Սմբատ Քէսէճեանի վկայութեամբ, օպերան բեմադրուել է 1869-ի վերջերին, Բերայում, Նաոմի թատրոնում, իտալական օպերային խմբի ջանքերով, ունեցել ընդամենը երեք ներկայացում. «Այդ ներկայացման համար իտալական խումբը մեծ ծախսեր ըրած էր: Խաղը երեք անգամ ներկայացնելով հազիւ հազ կրցան ծախսերը գոցել...»: Հետագայում օպերայի առանձին հատուածներ հնչել են Վիեննայում եւ Նիսպոլում՝ Եւրոպայում տարածելով կոմպոզիտորի համբաւը:

Յատկանշական է, որ հայոց անդրանիկ «Արշակ Բ.» օպերայի լիբրետոն, որի ստեղծման համար ներդնչանքի աղբյուր է ծառայել 1862թ. Ջէյթունի փառահեղ դիւցազնամարտը, նախապէս գրուել է իտալերէն, այնուհետեւ հայացուել: 1871-ին Կ. Պոլսում հրատարակուած լիբրետոյի նախաբանում, որը վերնագրուած էր «Ազգ», Թերզեանը գրել է. «Խաղը բուն իսկ իտալերէն գրած ըլլալովս, բաւական դժուարաւ եղած են քարգմանութեան այն տեղումսն, ուր հարկ էր՝ երգին յարմար՝ իտալերէն ոտանաւոր մոյնչափ ի Հայ փոխել: Արտասանելի (recitativo) տեղերը արձակ քարգմանեցի»:

Ժամանակակիցներից շատերը կարծել են, թէ Թերզեանի հայրն իտալացի է, մայրը՝ յոյն: Նոյնիսկ յուզարկաւորութեան օրը Հ. Սահակ Տէր-Մովսէսեանի արտասանած դամբանականում ասուել է. «Թովմաս Թերզեան Հայ չէ, իր արիւնը Հելլէն է, Իտալացի է. ինչ որ մէջ Հայ կայ՝ սիրտն է»: Մինչդեռ նրա մայրը՝ Աննա, Փրանսահայտակ կորսիկացի էր, իսկ հայրը, ինչպէս փաստում են բանաստեղծի որդիները, Յակոբ Ռոսսի անունով զմիւռնիացի կաթողիկէ հայ էր, դերձակ, թէեւ իտալացած՝ բայց հայ լինելու գիտակցութիւնը պահպանած: Թերզեանը սովորել է Վենետիկի Մխիթարեանների Մուրատ-Ռափայէեան վարժարանում. «Թերզեան հայ քանաստեղծը, Մխիթարեանց քանկագին մուրներէն մէկն է հայ ազգին», - իրաւացիօրէն նկատել է Արշակ Զօպանեանը: Վենետիկ մեկնելիս Թերզեանը չգիտէր հայերէն ոչ մի բառ, տան խօսակցական լեզուն յունարէնն էր, նաեւ՝ իտալերէնը, Փրանսերէնը: Մխիթարեանների առաջնորդութեամբ է նա ստացել լիակատար հայի հոգեբանութիւն, կատարելապէս իւրացրել հայերէնը՝ դարձնելով իր իսկական մայրենի լեզու: Սէրը մայրենի լեզուի նկատմամբ արթնացրեց հայրական արեամբ իրեն փոխանցուած սէրն առ ազգն ու հայրենիքը, որը ցմահ սիրեց որդիաբար:

Իտալերէն գրուեց նաեւ հայկական առաջին հեքիաթ-օպերան, Զուհաճեանի կարապի երգը՝ «Զեմիրեն», Տիգրան Գալեմճեանի լիբրետոյի հիման վրայ, որը հետադաշում, Փարիզում բեմադրելու նպատակով Անմեղեանը թարգմանեց Փրանսերէն: «Զեմիրեն», որի հանդէպ Վարպետը մի առանձին դուրգուրանք է տածել, ներկայացուել է Պոլսում (Բերա) 1894-ին՝ Մ. Ֆրանձիւնիի իտալական խմբի ջանքերով եւ մեծ յաջողութիւն ունեցել:

Հայկական ռոմանսի անդրանիկ նմուշներից մէկը՝ Տ. Չուխանեանի «Գարուն» ռոմանսը (լոյս է տեսել Կ. Պոլսում 1862-ին) ստեղծուել է հայ նոր քնարերգութեան հիմնադիր, Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի շրջանաւարտ Մկրտիչ Պէշիկթաշլեանի (1828-1868) համանուն քերթուածի հիման վրայ: Յատկանշական է, որ «Գարուն» ռոմանսի առաջին կատարողն էր դարձեալ Խալիլայում ուսումն առած, Վենետիկի երաժշտանոցն աւարտած հայ օպերային երգիչ, հրաշալի տենոր Յովհաննէս Աճեմեանը (1854-1914): Հետագայում նա հեղինակեց հայկական առաջին կոմիկական՝ Տ. Չուխանեանի «Արիֆի խորամանկութիւնը» օպերայի լիբրետոն: Ահաւասիկ մի դրուագ՝ Տիգրան Արփիարեանի յուշագրութիւնից. «Իրիկուն մը, Պէշիկթաշլեանի մահէն՝ քանի մը տարի առաջ, ընթրիքի հրաւեր կար բարեկամի մը տունն, ի Բանկալթի: Բանաստեղծը խոնջ ու տկար, կանուխէն հասած էր ու պատուհանին մօտ ընկողմանած՝ կը դիտէր վերջալոյսը, որ կէս մութի մէջ թողած էր սրահը: Ներս կը մտնէ Անեմեան ու չուզելով խոսիլ Պէշիկթաշլեանի խոյանքը, կ'անցնի դաշնակին առջեւ ու կը սկսի մեղմիւ նուագել ու երգել Գարունը:

Չուխանեան, ինքն ալ շատ երիտասարդ այն ատեն, ամուսն իրիկուն մը, ի դարձին Վոսփորէ, նաւակին մէջ՝ դեռատի արուեստագետի մը ու սիրող սրտի մը բոլոր ներշնչումովը՝ յօրինած էր եղանակն այդ երգին, երգ ու եղանակ՝ բանաստեղծին երգած առաւօտեան հովին պէս անոյշ, աղու եւ սրտագին, անոր թռչնոց երգին պէս ու վտակին մրմունջին պէս ակնակիտ ու հանդարտիկ:

Պէշիկթաշլեան կը ցնցուի, կը դարձունէ աչքերը բնութեան հեռապատկերէն դէպի սրահին խորը, դաշնակին ու երգչին կը յառէ անշարժ, գրեթէ ցնորական երեւոյթով մը, նակատը ձեռքին մէջ առած, իր հիւանդ կուրծքին բոլոր հեւքով ու խոռովեալ հոգւոյն բոլոր վրդովումովը հետեւելով այն գործիքին ու ձայնին, որ կենդանութիւն կու տային իր երգին:

Մութը իջած էր արդէն սրահին մէջ, երբ վերջին վանգիւնը կը թոթոյ երիտասարդ արուեստագետին մատներուն տակ ու վերջին շեշտը կը մարի իր շրթներուն վրայ: Ու այդ

¹ Մ. Պէշիկթաշլեանը վախճանուել է 1868թ. նոյեմբերի 28-ին:

մութին մէջ, ուր երկու բարեկամները դեռ չէին խօսած, կը լսուի բանաստեղծին գոս ձայնը.

— Զայնդ դալար...»²:

Մահից մի քանի ամիս առաջ. Մ. Պէշիկթաշլեանն անդամագրուում է Կ. Պոլսի հայ մասոնների «Մէր» օթեակին, որի գործունէութիւնն ունէր ազգային-ազատագրական բնոյթ: Ընծայման օրն, ի պատիւ բանաստեղծի, օթեակում երգել են նրա հանրայայտ «Եղբայր եմք մեք» քերթուածի հիման վրայ իտալացի կոմպոզիտոր Կարլոյ Ֆոսքինիի երգը: Երգը, որպէս համաշխարհային տիեզերական եղբայրութեան ներբող, հետագայում դարձել է հայ մասոնների օրհներգը, ինչպէս եւրոպացիների համար Մոցարտի «Bundes Lied»-ը:

Հայկական թեման բազմիցս է արծարծուել իտալական օպերաներում. այսպէս 1697 թուականին Տ. Ալբրինոնին յօրինել է «Տիգրան Մեծ, թագաւոր Հայաստանի» օպերան՝ Զուլիոյ Զեզարէի լիբրետոյով, որը նոյն թուականին բեմագրուել է Վենետիկի Սան-Կասիանոյ թատրոնում:

Նէպոլեան օպերային փառապանծ դպրոցի հիմնադիր եւ խոշորագոյն ներկայացուցիչ Ալեսսանդրոյ Սկարլատիի հեղինակած 125 օպերաների շարքում իր ուրոյն տեղն ունի «Տիգրան Մեծը», որի լիբրետոյի հեղինակն է Դոմենիկոյ Լալլին: Օպերան ստեղծուել 1715-ին եւ կոմպոզիտորի ղեկավարութեամբ բեմագրուել Նէպոլի «Սուրբ Բարդուղիմէոս» թատրոնում, ապա հնչել «San Carlo» արքունական թատրոնում, Իտալիայի միւս քաղաքներում: Հետագայում նրա որդին՝ Դոմենիկոյ Սկարլատտին գրում է «Տիգրան Մեծ կամ Պոմպէոսը Հայաստանում» օպերան:

1761-ին Տորինոյ քաղաքի օպերային թատրոնում բեմագրուել է իտալացի կոմպոզիտոր, նէպոլեան օպերային դպրոցի ներկայացուցիչ Նիկոլոյ Պիչչինիի նորաստեղծ «Տիգրան Մեծ» օպերան (լիբրետոյի հեղինակ՝ Կալալիերոյ Զինա Սանթի): Հայոց թագաւորին են նուիրուած Պիետրոյ Բերնանդոնիի «Տիգրան» եւ Անտոնիոյ Մարիա Բոնոնչինիի «Տիգրան Մեծ՝ թագաւոր Հայաստանի» օպերաները նոյնպէս...

Իտալացի կոմպոզիտոր, իտալական վիպապաշտական օպերային դպրոցի ներկայացուցիչ, bel canto արուեստի վարպետ,

երաժշտական թատրոնի փայլուն գիտակ, Գաետանոյ Դոնիցետտին (1797-1848) Վինչենցոյ Բելլինիի մահից յետոյ (1835) գլխավորեց իտալական օպերային դպրոցը (Ջովինոյ Ռոսսինին օպերային կոմպոզիտորի իր կարիերան աւարտել էր դեռեւս 1829-ին՝ «Վիլհելմ Թելլ»-ով): Ընդհուպ մինչեւ 1840-ականների կէսերը, մինչ Վերդիի առաջին յաղթարշաւը նա, իրաւամբ, համարուծ էր ազգային երաժշտական թատրոնի անգերազանցելի վարպետն ու խոշորագոյն հեղինակութիւնը:

Դոնիցետտիի հեղինակած 74 օպերաներից մեզ՝ հայերիս համար, առաւել թանկ ու հոգեհարազատ է «Պոլիկտոսը», որի իրադարձութիւնները ծաւալուծ են Գ. դարուծ, Հայաստանուծ: Աւելորդ չենք համարուծ նկատել, որ Դոնիցետտիի աւագ եղբայրը՝ իտալացի դիրիժոր, մանկավարժ ու կոմպոզիտոր Ջուզեպպէ Դոնիցետտին (1788-1856) 1828 թուականին հրաւիրուել էր Կ. Պոլիս եւ նշանակուել սուլթանական արքունիքի գլխաւոր երաժշտական ղեկավար, երաժշտութիւն դասաւանդել տեղի երաժիշտներին, կազմակերպել Թուրքիայուծ եւրոպականացուած առաջին գլխուորական նուագախումբը: Գաետանոյ Դոնիցետտին «Պոլիկտոսն» ստեղծել է Ֆրանսիացի դրամատուրգ Պիեռ Կոռնելի (1606-1684) «Պոլիեկա» ողբերգութեան հիման վրայ, որը գրուել է 1641-42 թուականներին: Պիեռի հիմքուծ ընկած են 16-րդ դարի բիւզանդացի պատմաբան Միմէոն Մետաֆրասթէսի «Վարք սրբոց» աշխատութիւնը եւ կարգինալ Յեզար Պարոնիուսի «Եկեղեցական նոթերը»: Ըստ Կոռնելի, «Պոլիկտոսը ապրել է 205 թուականին, հայ էր... Նա պատուեց կայսեր հրամանը, փշրեց կուռքերի արծաճները, որոնք, հայերի կողմից պաշտուելու համար գետեղուծ էին պատուանդանների վրայ... Չանապու իր կնոջ պաղատաճներին, աներոջ խնդրաճին՝ վերադառնալ հնոց հաւաքին», Պոլիկտոսը ընդունեց քրիստոնէութիւնը, ենթարկուեց հետապնդումների եւ, ի վերջոյ, տանջամահ արուեց հէնց աներոջ կողմից: Իրադարձութիւնները ծաւալուել են Միլետա՝ մեզ յայտնի Մալաթիա քաղաքուծ:

Դոնիցետտին օպերան գրեց 1838-ին. մէկ տարի անց գրաքննութիւնն արգելեց «Պոլիկտոսը»՝ կոմպոզիտորը մեկնեց Փարիզ: Փարիզուծ, 1840-ին, Grand-Opera-յուծ բեմադրուեց օպերան՝ «Նահատակները» (Les Martyrs) վերնագրուծ, նոր իմբադրութեամբ: Հայրենիքուծ «Պոլիկտոսը» բեմադրուեց միայն 1848-ին՝ Նէապոլի «San Carlo» թատրոնուծ:

Իտալական պրեմիերայից 130 տարի անց (1978), Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարեանի խնդրանք Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջինը «Պողիկտոսի» պարտիտուրը ստանալու նպատակով բանակցութիւններ է սկսում իտալական նոտային գրադարանի հետ: Շուտով պարտիտուրը հասնում է Հայաստան. 1993 թուականի յուլիսի 17-ին Երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնում Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ Տիգրան Լեւոնեանի բեմադրութեամբ տեղի ունեցաւ «Պողիկտոսի» հայկական պրեմիերան՝ ձօնուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին: Վերածնունդ է «Պողիկտոսը» հէնց հայոց հողում: 1996-ին Հայկական մշակոյթի օրերի շրջանակներում Դոնիցետտիի սակաւ յայտնի այս օպերան ներկայացուեց Մոսկովայի «Մեծ թատրոնում», որին յաջորդեցին օպերային թատրոնի հիւրախաղերն Իսպանիայում 1998-ի ամռանը. Դասական արուեստի միջազգային ԻԱ. փառատօնի շրջանակներում հնագոյն Մերիդա քաղաքում հնագոյն անտիկ ամֆիթատրոնի տարածքում 2 օր անընդմէջ ներկայացուեց «Պողիկտոսը»: Մամուլի գնահատմամբ «ներկայացումը դարձաւ փառատօնի մեծ աստղը»:

Օպերայի լիբրետոյի հեղինակն էր Սալվատորէ Կամմարանոն. նրա անուան հետ էր կապուած Դոնիցետտիի լաւագոյն գործերից մէկի՝ «Լուչիա դի Լամերմուր» օպերայի ստեղծումը, որը բեմադրուեց 1835-ին Նէապոլում: Յատկանշական է, որ լիբրետիստ Կամմարանոն համագործակցել է նաեւ Վերդիի հետ. համագործակցութեան շնորհիւ լոյս աշխարհ եկան «Ալզիրա» (1845, Նէապոլ, San Carlo), «Ճակատամարտ Լենյանոյի մօտ» (1849, Հռոմ, Argentina), «Լուիզա Միլեր» (1849, Նէապոլ, San Carlo) օպերաները: Վերդիի եւ Կամմարանոյի վերջին համատեղ աշխատանքը «Տրուբադուրն» էր, որի ստեղծումը ձգձգուեց լիբրետիստի հիւանդութեան պատճառով. անաւարտ թողնելով լիբրետտոն՝ Կամմարամոն յանկարծամահ եղաւ 1852-ի ամռանը: «Տրուբադուրը» բեմադրուեց Հռոմում 1853-ին: Պատահականութիւն էր արդեօք, թէ՛ գուգադիպութիւն, որ 1864թ. օգոստոսին Պետերբուրգում լոյս տեսաւ օպերայի հայերէն կլաւիրը՝ Յովհաննէս Սահրատեանի թարգմանութեամբ. Միքայէլ Նալբանդեանի շնորհիւ (նա էր խորհուրդ տուել Սահրատեանին թարգմանել օպերան եւ հետամուտ եղել մինչեւ վերջ) երեւան եկաւ հայկական առաջին թարգմանական օպերան՝ իր պրեմիերայից ընդամէնը 11 տարի անց:

1859-ին, յընթացս եւրոպական իր շրջագայութեան, Մայնի Ֆրանկֆուրտում Միքայէլ Նալբանդեանը (1829-1866) գրում է «Իտալացի աղջկայ երգը» բանաստեղծութիւնը՝ ձօն առ իտալական ժողովրդի ազատագրական պայքարը: Իտալացիներն իրենց ազգային դրօշը պարզած՝ նետում են մարտի դաշտ, կործանելու աւստրիական շղթաները: Իտալիայի ազատագրումը ձեռք է բերում նրա որդիների արեամբ, եւ բանաստեղծը երազում է այն պահը, երբ նրանց խանդավառութեան կէսը կամ գոնէ կէսի կէսը՝ կ'երեւար եւ հայերի մէջ: Նա կշտամբում է հայերին եւ քաջալերում միաժամանակ.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը գոհուի:

Իտալական ազատագրական շարժումները հնարաւորութիւն տուեցին բանաստեղծին՝ իր ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին հաղորդել ազգային-ազատագրական պայքարի այս պայծառ աւանդը:

Յատկանշական է, որ այս բանաստեղծութիւնն էլ ընկած է ներկայիս Հայաստանի հանրապետութեան պետական օրհներգի հիմքում:

1907-ի յուլիսին Կոմիտասն (1869-1935) Արշակ Զօպանեանի ընկերակցութեամբ այցելում է Սուրբ Ղազար՝ Վենետիկի ձեռագրատանը մասնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով: Միիթարեան միաբանութեան դահլիճում եւ Սուրատ-Ռափայէլեան վարժարանում Կոմիտասը դասախօսութիւններ է կարդում հայ ժողովրդական-եկեղեցական երաժշտութեան մասին՝ գուգահեռաբար երգերի կատարմամբ հաստատելով իր տեսական դրոյթները: Բանախօսութիւններից ստացուած հիացական տպաւորութիւնները զետեղուել են «Բազմավէպի» յուլիս-օգոստոսի համարում՝ «Հայկական երաժշտութիւնն ի Վենետիկ» վերտառութեամբ յօդուածում:

Զ. Վերդիի մահուան բօթից ցնցուած Կոմիտասը գրում է «Յուլիսի Վերդի» յօդուածը (1904, «Տարազ», Թիֆլիս)՝ տալով մարդարէական գնահատականներ. «Վերդին ոչ միայն անցեալի երաժիշտ է, այլեւ ապագայի: Նա նուագերգութեան պատմու-

թեան մէջ գրաւում է մի ընդարձակ տեղ»։ «Վերդին մեռաւ։ Իտալական երաժշտութիւնն անժառանգ մնաց», - եզրափակում է իր յօդուածը Կոմիտասը։

Յաւարտ խօսքիս փափագում եմ, որ դարերի պատմութիւնն ունեցող հայ իտալական երաժշտական կապերը հետզհետէ է՛լ աւելի սերտանան ու ամրանան, քանզի բազում են ընդհանրութիւնները մեր եղբայրական ժողովուրդների ճակատագրում, պատմութեան մէջ եւ մշակոյթում։ Լիայոյս եմ, որ դեռ մենք բազում առիթներ կ'ունենանք համատեղ մշակութային ծրագրերի իրականացման, բազմաշերտ ու բազմաբնոյթ համագործակցութեան համար։

ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ

Pages From the History of Armenian-Italian Musical Ties

ANNA G. ASATRYAN

(summary)

The Armenian-Italian musical ties come deep from centuries and have rich traditions.

Dikran Chouhadjian (1837-1898), the Armenian opera art founder, started his musical education in Istanbul, where he took piano lessons from Italian Manzoni. In 1862, he left Constantinople for Milan, where he studied for three years, expanding his musical knowledge.

In 1868, Chouhadjian composed a four-act opera in Italian language entitled "Arshak II". It was performed for the first time in 1869 at the Naum Theatre by an Italian opera. Tovmas Terzian, who studied at Venice Moorat-Raphaelian School, wrote the libretto of the first Armenian opera.

In 1890, Chouhadjian composed the opera "Zemireh", also in Italian language, and the New French Theatre and the Italian Franzini Company staged it in 1894.

The Armenian theme was reflected in a number of Italian operas; Alessandro and Domenico Scarlatti, Niccolo Piccini, P. Bernandoni, A. M. Bononcini and others wrote operas about the King Dikran. 17 July 1993, D. Levonyan staged in "Al. Spendaryan Armenian National Academic Opera and Ballet Theatre" the opera by G. Donizetti "Poliuto", where all the scenes take place in Armenia. The opera was also performed in Moscow "Bolshoi Theatre" (1996) and in Spain (1998), achieving big success.

The great Armenian composer Komitas is the author of the article "Hovsep Verdi", where he has stated: "Verdi is not only the musician of the past, but of the future as well".